Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025-ԱԱ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 7. Արարատի -1 (Արտաշատ, Մասիս) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.-30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.10.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br><br>Թիմ լիդեր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2025.10.09
16:39:12 AMT

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 41 շահառուի Արարատի մարզի Արտաշատ և Մասիս համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում իրականացվել է 9 դեպքի վարում՝ վերափաստագրման կազմակերպում, հաշմանդամության կարգավիճակի ձեռքբերման կազմակերպում, աջակցող միջոցի՝ ձեռնափայտի, ձեռքբերման կազմակերպում:
  Հաշվետու ժամանակահատվածում թվով 14 շահառուի տրամադրվել է հոգեբանական առաջնային խորհրդատվություն, իսկ 1 շահառուի՝ շարունակական բնույթի անհատական հոգեբանական ծառայություն:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Տնային պայմաններում խնամքի ծառայությունից օգտվող 6 շահառու մասնակցել է Արտաշատի ցերեկային կենտրոնում կազմակերպված հետևյալ 7 միջոցառումներին՝ Սահմանադրության օր, Սուրբ Աստվածածին վերափոխման տոն, Անկախության օր, էքսկուրսիա դեպի Աշտարակ, էքսկուրսիա դեպի Սևան, շահառուների ծննդյան տարեդարձերի նշում (2 անգամ):
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 41 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 41 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 21 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և

բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք, 15 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա:
«Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակներում վիրահատվել է տնային սպասարկման 5 շահառու:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ մշակված նյութերը.

- Անկախության օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/17EDssw8KN/),
- Սուրբ Աստվածածնի վերափոխման տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/172djMSkMY),
- Էքսկուրսիա դեպի Սևան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1J7Jt23sWe/):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 40/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 4 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 37 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ - 39 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 41 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 41 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 41 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 6 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 17 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական աջակցություն | 15 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03»10.2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)